

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس


LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանկ Էնգել՝

Արցախը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) Ադրբեջանի մաս չի հանդիսանում և երբեք չի լինի



Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0
- 2- Հայաստանի Հանրապետություն.....1
- 3- Արևմտյան Հայաստան.....5
- 4- Միյունք.....7
- 5- Միջազգային.....8
- 6- Հասարակական.....9

Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....1-3
- Գրականություն.....4-6

Շապիկի առաջին էջում՝ Արցախը Ադրբեջանի մաս չի հանդիսանում եւ երբեք չի լինի

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 214, Օգոստոս 2016 No. 214, August 2016

ماهنامه لويس - شماره ۲۱۴ شهریور ماه ۱۳۹۵

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդուկյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**
POBox 15875-9488 Tehran – Iran
E-mail : louys_monthly@yahoo.com
Internet : www.louysonline.com

Յոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

ماهنامه لويس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Արցախը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) Ադրբեջանի մաս չի հանդիսանում եւ երբեք չի լինի



Արցախը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն) Ադրբեջանի մաս չի հանդիսանում եւ երբեք չի լինի: Այդ մասին հայտնել է Եվրախորհրդարանի պատգամավոր Փրանկ Էնգելը:

Նրա խոսքով, անհրաժեշտ է վերջ տալ այնպես գործելուն, ասես իրականությունն այլ է: «Եթե դու ագրեսիվ պատերազմ ես սկսում եւ պարտություն ես կրում, չի կարելի վերադառնալ նրան, ինչ կար մինչ այդ: Հակառակ դեպքում Կալինինգրադը մինչեւ հիմա Քյոնիկսբերգ կկոչվեր», — ընդգծել է Փրանկ Էնգելը:

Անդրադառնալով այն հարցին, թե երբ վերջապես Եվրոպական խորհրդարանը հանդես կգա հստակ եւ հասցեական հայտարարությամբ, որը կդատապարտի ադրբեջանական զինված ուժերի բռնության պարբերական գործողությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ, Փրանկ Էնգելն ասել է. «Եվրոպական խորհրդարանը հստակ դիրքորոշում է հայտնել ընթացիկ տարվա ապրիլին, բայց խորհրդարանականների մեծամասնությունը դեռ պետք է առերեսվի փաստերին»:

Հիշեցնենք, որ ապրիլի 12-ին՝ Եվրոպական խորհրդարանի լիազումար նիստին դարաբաղյան խնդրի վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել: Շատ եվրոպացի պատգամավորներ (Փրանսիայից, Չեխիայից, Լեհաստանից, Կիպրոսից, այդ թվում նաև՝ լյուքսեմբուրգցի խորհրդարանական Փրանկ Էնգելը), երկար տարիների ընթացքում առաջին անգամ կոչ են արել ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը եւ պատժամիջոցներ կիրառել Բաքվի վարչակարգի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետություն

Սեֆիյանի նամակը՝ «Վարդաշեն» ՔԿՀ-ից. Վերախմբագրելով Սասնա ծռերի օրակարգը. Կա 4 պահանջ



«Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ժիրայր Սեֆիյանը «Վարդաշեն» ՔԿՀ-ից հանդես է եկել նամակով, որտեղ անդրադառնում է Սերժ Սարգսյանի հրաժարականի պահանջին և պայքարի հետագա ընթացքին:

Նամակում, մասնավորապես, ասվում է.

«Այն ապատեղեկատվությունը, որ օրեր առաջ շրջանառության մեջ դրվեց Վիտալի Բալասանյանի կողմից, թե իբր Սասնա ծռերի տղաները և ես հրաժարվել ենք Սերժ Սարգսյանի հրաժարականը պահանջելուց, նույն պահին իսկ հերքվեց Սասնա ծռեր խմբի ներկայացուցիչների կողմից և երկու օր անց՝ իմ կողմից:

Ցավալիորեն այդ ապատեղեկատվությունը շարունակվում է շրջանառվել, այս անգամ ասկայն, ընդդիմադիր գործիչ, հարգելի Նիկոլ Փաշինյանի կողմից: Վերջինս մատնացույց է անում հուլիսի 31-ին իմ տարածած հայտնի նամակը՝ ասելով, «որ այնտեղ ես Սերժ Սարգսյանի հրաժարականի պահանջ չեմ բարձրացրել»: Դժբախտաբար, Նիկոլ Փաշինյանը տարբերակներում է ընկալել այդ նամակի բովանդակությունը, մասնավորապես չնկատելով նախաբանում գրված պարբերությունը, որտեղ սեւով սպիտակի վրա նշված է, որ այս նամակի բովանդակությունը բացառապես վերաբերում է հավանական բանակցությունների առաջարկությանը որպես ոսկե միջին, որի արդյունքում տղաները պետք է զենքը վայր դնեն: Ծեշտում եմ, բացառապես վերաբերում էր տղաների կողմից զենքը վայր դնելուն ու արյունահեղությունը կանխելուն:

Ես, գտնվելով մեկուսացման մեջ և ամբողջությամբ չտիրապետելով իրավիճակի տեղեկատվությանը, երկկողմ արյունահեղությունը կանխելու այսպիսի մարտավարություն եմ պատկերացրել, ու չգիտեմ, իմ փոխարեն գուցե այլ մարդ կամ Նիկոլ Փաշինյանը լիներ, հնարավոր է գտներ այդ վտանգը կանխելու այլ ուղի:

Հակառակ նրան, որ այս կեղծ տեղեկատվությունը այդ օրը հերքվել է տղաների և իմ կողմից, ու ես, տեղեկանալով Վարուժան Ավետիսյանի զենքը վայր դնելու պահին հայտնի ելույթին, նաև ընթերցելով օգոստոսի 3-ի Հիմնադիր խորհրդարանի նախագահ, ընդհատակում գտնվող Գարեգին Չուգասյանի Սիմիլներթին տված հարցազրույցում նշված այժմյան գերակա 7 կետերից բաղկացած պահանջները, տարակուսանքով եմ ընդունում Նիկոլի եզրակացությունը:

Անցնելով առաջ և օգտվելով առիթից, հորդորում եմ Նիկոլին ու ընդդիմադիր գործիչներին ընկալել պահի լրջությունը ու ամեն ինչ անել՝ իմաստավորելու Սասնա ծռերի

գոհողությունը, իմաստավորել հուլիսի 17-ից սկսյալ նրանց աջակցող մեր ապստամբ ժողովրդի գոհողության պատրաստակամությունը և առաջնահերթորեն իրար հետ համախմբված և համերաշխ լինել: Ծարժումը անգլուխ չթողնելու նպատակով ձեւավորել վերկուսակցական տարաբնույթ ձեւաչափեր և ժամ առաջ նետվել մեր երկիրը ազատագրելու գործին:

Անփոփելով խոսքս, փորձեմ վերախմբագրել վերջին տարիների մեր կողմից բարձրացված քաղաքական օրակարգերի, Սասնա ծռերի պահանջների, համահայկական նպատակի քաղաքական օրակարգը հետեյալ տրամաբանական հերթականությամբ:

1. Ռազմագերիների և քաղաքանտարկյալների ազատում
2. Վստահության կառավարության ձեւավորում /հակաճգնաժամային և անցումային փուլի ծրագրով օժտված/
3. Սերժ Սարգսյանի հեռացում
4. Արտահերթ խորհրդարանական և նախագահական ընտրություններ:

Այսօրվանից ՀՀ քաղաքացիները կարող են առանց վիզայի մուտք գործել Իրանի տարածք. Դեսպան



Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Հայաստանում Իրանի արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Քազեմ Սաջադին և նրա հետ քննարկել հայ-իրանական հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր և կարելի էր ամբողջատեսակական փոխգործակցության հետագա զարգացումն ու ընդլայնումը:

Կառավարությունից հայտնում են, որ կողմերն անդրադարձ են կատարել Հայաստանի և Իրանի կառավարությունների միջև վերջերս ստորագրված քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին համաձայնագրին: Դեսպան Սաջադին նշել է՝ արդեն այսօրվանից Իրանի բոլոր սահմանային անցակետերին տեղեկացվել է, որ ՀՀ քաղաքացիները կարող են մուտք գործել Իրան՝ առանց մուտքի արտոնագրի:

Հովիկ Աբրահամյանը և Սեյեդ Քազեմ Սաջադին վստահություն են հայտնել, որ երկու հարեւան պետությունների միջև առանց վիզայի ռեժիմը կխթանի զբոսաշրջության զարգացմանն ու կստեղծի առավել նպաստավոր պայմաններ ՀՀ և ԻԻՀ՝ քաղաքացիների փոխադարձ այցելելությունների համար:

Կյանքից հեռացել է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Թերեզա Միրզոյանը



Հայաստանի մշակույթի նախարարությունը խոր վշտով հայտնում է, որ ս. թ. օգոստոսի 7-ին, 94 տարեկանում կյանքից հեռացել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Թերեզա Միրզոյանը:

Անվանի քանդակագործի հոգեհանգստի արարողությունը կկայանա օգոստոսի 9-ին, ժամը 19:00-ին Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում:

Վերջին հրաժեշտը՝ օգոստոսի 10-ին, ժամը 12:00-14:00-ն Հայաստանի նկարիչների միությունում (Աբովյան փող. 16

շենք): Հուղարկավորությունը Երևանի քաղաքային գերեզմանատանը:

Սերժ Սարգսյանը լուծարել է Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմը



Նախագահ Սերժ Սարգսյանը լուծարել է Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմը:

Նախագահի կարգադրության մեջ ասվում է. «Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ
ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ՆԿ-
139-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 18-րդ հոդվածը.

1. Լուծարել «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի օգոստոսի 25-ի «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՆԿ-139-Ն կարգադրությունը:
3. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին և Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին՝ մինչև սույն թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնել Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարության կանոնադրությունը և կառուցվածքը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ հարակից այլ իրավական ակտերի նախագծերի հետ միասին:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հետ համատեղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ լուծարման արդյունքում կրճատվող քաղաքացիական հատուկ ծառայողների սոցիալական երաշխիքների ապահովման համար:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:
2016-08-10

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 18-րդ հոդվածը.

1. Լուծարել «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի օգոստոսի 25-ի «Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՆԿ-139-Ն կարգադրությունը:

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարին և Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին՝ մինչև տույն թվականի սեպտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնել Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարության կանոնադրությունը և կառուցվածքը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ հարակից այլ իրավական ակտերի նախագծերի հետ միասին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հետ համատեղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ լուծարման արդյունքում կրճատվող քաղաքացիական հատուկ ծառայողների սոցիալական երաշխիքների ապահովման համար:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից»:

Բակո Սահակյան. Ողջամիտ, իրավացի եւ համարժեք փոխզիջումներն անհրաժեշտ են



«Ղարաբաղի հիմնախնդրի լուծմանն ուղղված բանակցությունների համար նոր փուլ կբացվի, եթե Ադրբեջանը հարգի 1994 թվականի հրադադարի համաձայնագիրը, Լեռնային Ղարաբաղը նորից միանա բանակցություններին եւ հաղթահարվեն հոգեբանական արգելքները, որոնք գալիս են Ադրբեջանի վրեժխնդիր քաղաքականությունից», - «Ազատություն» ռադիոկանալի փոխանցմամբ, այդ մասին ասել է Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը Ֆրանսիայի խորհրդարանի էլեկտրոնային թերթին տված հարցազրույցում:

«Ադրբեջանը պետք է կարողանա հրաժարվել դարաբաղցիների եւ հայերի հանդեպ իր ազգատյաց քաղաքականությունից, իր անհեռանկար արկածախնդրությունից եւ հանձն առնի հարգելու մյուս ժողովուրդների հիմնական ազատություններն ու իրավունքները», - ասել է Սահակյանը:

Ղարաբաղի նախագահը ապրիլյան քառօրյա պատերազմը որակել է հայերի հանդեպ Ադրբեջանի «հայատյաց գաղափարախոսության եւ իշխանությունների բռնապետության արդյունք»:

Պատասխանելով փոխզիջումների մասին հարցին, Լեռնային Ղարաբաղի նախագահն ասել է, որ որեւէ հակամարտության լուծում, հատկապես երբ դա այնքան բարդ է, որքան Լեռնային Ղարաբաղինը, կարող է իրականացվել միայն փոխզիջումների միջոցով:

«Ողջամիտ, իրավացի եւ համարժեք փոխզիջումներն անհրաժեշտ են», - հավելել է նա՝ շարունակելով. - «Մենք պատրաստ ենք անել փոխզիջումներ, եթե դրանք չեն խաթարում մեր երկրի անվտանգությունը, եթե դրանք չեն հանդիսանում պատեհ առիթներ մեր հակառակորդի համար՝ մեզ վրա նոր հարձակումներ գործելու»:

Անդրադառնալով միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցին եւ այդ ուղղությամբ արձանագրած հաջողություններին՝ Բակո Սահակյանը վստահություն է հայտնել, որ Ղարաբաղի ճանաչումը մոտ ապագայում շարունակվելու է ավելի մեծ հաջողությամբ՝ իր դրական հետեւանքներն ունենալով Հարավային Կովկասի կայունության վրա:

«Օրինական է արդյոք աշխարհագրական մի տարածքում խմբված փոքրամասնության ինքնորոշման պահանջը» հարցին Բակո Սահակյանը պատասխանել է. - «Ինքնորոշման պահանջի իրավունք ունեն բոլոր ժողովուրդները, դա միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկն է: Բայց այդ իրավունքը դառնում է հրամայական մի պարտականություն այն ժամանակ, երբ պետությունը, որին միացված է նա, չունի մի այլ ցանկություն, քան այդ ժողովրդին ոչնչացնելը»:

Կարգալույծ են հռչակվել երկու արեղաներ

Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ են հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Տ. Հովհաննես արեղա Սահակյանը եւ Տ. Հայրիկ արեղա Հովհաննիսյանը:

Հայրապետական տնօրինության համար հիմք է հանդիսացել վերջիններիս կողմից ծառայության վայրը ինքնակամ լքելու փաստը:

Կարգալույծ եկեղեցականներն այսուհետ դասվում են աշխարհականների շարքը եւ կկոչվեն իրենց ավագանի անուններով՝ Վարդգես Սահակյան եւ Հովիկ Հովհաննիսյան:

Հատուկ թողարկում. 20 տարի անց Հայաստանը օլիմպիական ոսկի ունի

20 տարվա ընդմիջումից հետո Հայաստանը վերջապես ունեցավ օլիմպիական չեմպիոն: Ռիոյի օլիմպիական խաղերում գյումրեցի ըմբիշ Արթուր Ալեքսանյանը նվաճեց ոսկե մեդալ՝ կոտրելով անհաջողությունների 20-ամյա շղթան եւ դառնալով անկախ Հայաստանի պատմության երկրորդ եւ Հայաստանի պատմության 14-րդ օլիմպիական չեմպիոնը:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի 98 կգ քաշային կարգի եզրափակիչում աշխարհի կրկնակի չեմպիոնը 3:0 հաշվով վստահ հաղթանակ տարավ կուբացի Դանիել Կարբերայի նկատմամբ:

Իր ոսկե մեդալը գյումրեցի 25-ամյա ըմբիշը ստացավ ապրիլյան ագրեսիայի օրերին Արցախի սահմանները պաշտպանելիս արիաբար զոհված եւ հետմահու Արցախի հերոսի կոչում ստացած կրտսեր սերժանտ Ռոբերտ Աբաջյանի նկարով մարգաշապիկը հագին:

Ավելի ուշ նա հայտարարեց, որ իր հաղթանակը նվիրում է սահմանին կանգնած զինվորին եւ ապրիլյան պատերազմում զոհված հերոսներին:

Ռիոյում Ալեքսանյանի հաղթական գոտեմարտին հետեւում էին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ու ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը:

Արթուրի հետ ուրախությունը հենց Ռիոյում կիսելու հնարավորություն ուներ նրա հայրը՝ Գեուրգ Ալեքսանյանը: Մինչդեռ մայրը՝ տիկին Ծողիկը, որդու հաղթական գոտեմարտը, տվորության համաձայն, չի դիտել: Հուզմունքը շատ մեծ է, մայրը գերադասում է աղոթել եւ սպասել լավ լուրին:

Գյումրեցիներին հուզմունքը չխանգարեց լիարժեք վայելել հաղթանակի բերկրանքը: Վարդանանց հրապարակում հարյուրավոր գյումրեցիներ միասին դիտեցին Արթուրի գոտեմարտը: Հաղթանակից հետո նրանք ուրախությունից գրկում էին միմյանց, շնորհավորում: Ամբողջ գիշեր Գյումրիում տոնական մթնոլորտ էր: Գյումրեցիներն ավտոմեքենաներով դուրս էին եկել փողոց եւ քաղաքում շրջում էին ցնծության ազդանշաններով:

Դեռեւս Ռիո մեկնելուց առաջ հեռուստամեկնաբան Կարեն Գիլոյանը խոստացել էր՝ եթե օլիմպիական ոսկի ունենանք, սափրելու է գլուխը: Հենց Ռիոյում՝ խաղի ավարտից անմիջապես հետո, նա կատարեց իր խոստումը: Հեռուստամեկնաբանի գլուխը սափրեց հենց ինքը՝ Արթուր Ալեքսանյանը:

Տոնական տրամադրությունը համակել էր ամբողջ ազգին: Ծատ ընտանիքներում անցած գիշեր տոնական սեղաններ բացեցին ու խմեցին «Սպիտակ արջի» կենացը:

Տոնական տրամադրությունը մռայլեցին կադրերը այն մարզադպրոցից, որտեղ մարզվում է Արթուր Ալեքսանյանը: Այն արդեն տարիներ շարունակ անմիախթար վիճակում է՝ գուրկ ամենատարրական կոմունալ պամաններից:

Օրվա մյուս հիասթափությունն ապահովեցին մրցավարները: Հունահռոմեական ոճի ըմբշամարտի 66 կգ քաշային կարգում Հայաստանը ներկայացնող Միհրան Հարությունյանը ոսկե մեդալից զրկվեց միայն կողմնակալ մրցավարության պատճառով: Մերքիան ներկայացնող 30-ամյա Դավոր Շտեֆանեկի հետ եզրափակչում Միհրանին 2 անգամ պարտեր նստեցրեին, բայց նա հիանալի էր պաշտպանվում եւ միավոր չտվեց մրցակցին: Ի վերջո գրանցվեց 1:1 հաշիվը, մրցավարների որոշմամբ հաղթանակը շնորհվեց նրա մրցակցին, Միհրանը չկարողացավ զսպել արցունքները պարզեւտարության արարողության ժամանակ, ավելի ուշ նա հայտարարեց, որ պատրաստվում է հեռանալ սպորտից:

Այնուամենայնիվ, օգոստոսի 16-ը շատ արդունավետ էր Հայաստանի հավաքականի համար: Գերժանը քաշային ծանրորդ, 22-ամյա Գոռ Մինասյանը երկրորդ տեղը գրավեց +105 կգ քաշային կարգում:

Այսպիսով Հայաստանը Ռիոյի Օլիմպիական խաղերի մեդալային հաշվարկում 36-րդ տեղում է՝ 1 ոսկե, 3 արծաթե մեդալ: Մեր հարեւան երկրներից Վրաստանը 40-րդն է, Ադրբեջանը՝ 54-րդը, Թուրքիան՝ 55-րդը:

Հայաստանի 32 օլիմպիականներից արդեն պայքարն ավարտել են 28-ը: Օլիմպիական խաղերի փակումը օգոստոսի 21-ին է:

Պերմյակովը դատապարտվեց ցմահ ազատազրկման Ավետիսյանների սպանության գործով



Գյումրիում ավարտվել է Ավետիսյանների սպանության գործով դատական գործընթացը:

Օգոստոսի 23-ին՝ եզրափակիչ դատական նիստի ժամանակ, դատավոր Հարություն Մովսեսյանը հրապարակեց դատավճիռը: Ամբաստանյալ Վալերի Պերմյակովը մեղավոր է ճանաչվել մեղադրական բոլոր կետերով՝ Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանություն (104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ եւ 8-րդ կետեր), զինված հարձակում (175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետեր), սահմանի ապօրինի հատման փորձ (34-329 հոդվածի 1-ին մաս): Դատարանի վճռի համաձայն՝ Պերմյակովը դատապարտվել է ցմահ ազատազրկման:

Նշենք, որ վերջին նիստում ուժեղացվել էին անվտանգության միջոցառումները, մեծացվել էր նաեւ ոստիկանների թիվը: Դատավճիռը հրապարակվել է սպանվածների հարազատների եւ իրավահաջորդների ներկայացուցիչների բացակայությամբ: Ավելի վաղ տուժած կողմի փաստաբանները հրաժարվել էին մասնակցել գործընթացին՝ հայտնելով, որ դատավորը մերժում է իրենց միջնորդությունները եւ սահմանափակված է իր գործողություններում:

2015-ի դեկտեմբերի 18-ին սկսված դատական գործընթացը, չնայած բազմաթիվ բողոքների, ընթանում էր Գյումրիում տեղակայված ռուսական 102-րդ բազայի կայազորային դատարանի տարածքում: Ամբողջ գործընթացի ժամանակ Վալերի Պերմյակովը հրաժարվում էր ցուցմունք տալ՝ սահմանափակվելով մեղքն ամբողջովին ընդունելով: Առանցքային վկաների մի մասը դատարան այդպես էլ չներկայացավ, դրա փոխարեն հրապարակվել էին քննության ընթացքում նրանց ցուցմունքները: Դատական լուսմների ժամանակ պարզվել էր, որ քննչական փորձը կատարվել էր Ավետիսյանների տան մակետի վրա, այլ ոչ թե հենց Ավետիսյանների տանը:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, իրավապաշտպան Արթուր Սաքունցի կարծիքով քննությունը չի ընթացել պատշաճ մակարդակով, հայտնի չեն հանցագործության

դրդապատճառները, հնարավոր հանցակիցները կամ պատվիրատուները: Ռուսաստանից կույթական վնասը հատուցելու համար քաղաքացիական հայց ներկայացնելու մասին տուժող կողմի իրավահաջորդների մյուս փաստաբանների միջնորդությունը մերժվել է:



Որբերգական դեպքը տեղի էր ունեցել 2015-ի հունվարի 12-ին: Մեղադրական եզրակացության համաձայն՝ 2015-ի հունվարի 12-ին Գյումրիի ռուսական ռազմակայանի զինձառայող Վալերի Պերմյակովը մտել է Ավետիսյանների ընտանիքի տուն ու սպանել տան բնակիչներ Աիդա Ավետիսյանին, Հասմիկ Ավետիսյանին, Մերյոժա Ավետիսյանին, Արմեն Ավետիսյանին, Արաքսյա Պողոսյանին ու փոքրիկ Հասմիկ Ավետիսյանին: Հետո նա դանակով հինգ հարված է հասցրել 6-ամսական Մերյոժա Ավետիսյանին: Յոթ օր անց երեխան մահացել էր հիվանդանոցում:

Վալերի Պերմյակովին իր գործողությունները բացատրում է այն հանգամանքով, որ ուզում էր տուն վերադառնալ: Պերմյակովը ինքնակամ լքել է դիրքը՝ տանելով իր հետ ինքնաձիգը: Թափառելով գիշերային Գյումրիով՝ նա ցանկացել է խմել եւ կտրելով Ավետիսյանների տան մատուհանը՝ մտել է նրանց տուն: Աղմուկից արթնացած Հասմիկ Ավետիսյանը բղավել էր: Պերմյակովի պնդմամբ՝ ինքը վախեցել էր եւ դրա համար սկսել էր կրակել: Ընդ որում, հարեւաններից ոչ մեկը կրակոցի ձայներ չի լսել: Սպանելով ընտանիքի անդամներին՝ Պերմյակովը զգեստափոխվել էր եւ դիմել փախուստի՝ իր հետ տանելով տնից վերցրած մի փոքր գումար եւ սպանվածների բջջային հեռախոսները: Ընդ որում, սեփական համագրեւտն իր անունով եւ ազգանունով, ինչպես նաեւ ինքնաձիգը թողել էր Ավետիսյանների տանը: Պերմյակովին գտել էին ռուս սահմանապահները «Բայանդուր» ուղեկալի տարածքում:

2015-ի օգոստոսի 21-ին Գյումրիում կայազորային դատարանը Պերմյակովին դատապարտության համար 10 տարվա ազատազրկման էին դատապարտել խիստ ռեժիմով գաղութում:

Երևանում լույս է տեսել հայերի բռնի իսլամացման վերաբերյալ Թաներ Աքչամի գիրքը

Երևանում լույս տեսել հայտնի թուրք պատմաբան Թաներ Աքչամի գիրքը՝ հայերի բռնի իսլամացման վերաբերյալ: Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, Մելինե Անումյանի թարգմանությամբ լույս տեսած հայտնի թուրք պատմաբանի ներկայացվող գիրքը բաղկացած է երեք բաժնից:

Առաջին բաժնում հեղինակը խոսում է Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցով անաչառ կերպով զբաղվելու անհնարինության, այդ գործում իր կրած դժվարությունների և պետության կողմից իր դեմ կազմակերպված հալածանքների մասին:



Երկրորդ բաժնում ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան բանակում ծառայած հայազգի սպա Սարգիս Թորոսյանի հուշերի թուրքերեն հրատարակության շուրջ ծավալված խտրական ու կողմնակալ քննարկումների պատմությունը, որի ընթացքում Թ. Աքչամի նկատմամբ դարձյալ սկիզբ է առնում զրպարտությունների, անհիմն մեղադրանքների և հալածանքների մի մեծ արշավ:

Երրորդ բաժնում հեղինակը հարուստ փաստական հենքի վրա ներկայացնում է հայերի բռնի իսլամացման և ուժացման քաղաքականությունը 1915-1918 թթ.: Թ. Աքչամը պատմությանը քիչ հայտնի այս երևույթները գնահատում է որպես Հայոց ցեղասպանության կառուցվածքային տարրեր: Գիրքը թարգմանվել է հրատարակության է պատրաստվել Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում պատասխանատու խմբագիր Հայկազուն Ավրդյանի խմբագրությամբ:

Արևմտյան Հայաստան

Թուրքիայում հայ վարպետը Ararat բրենդով ոսկերչություն է անում



Չնայած որոշ դժվարություններին՝ Թուրքիայի շուկայում պահանջարկ կա, եւ աշխատել հնարավոր է: Այդ մասին ասաց թուրքական Ararat Jewellery ընկերության ղեկավար, հայազգի Էրջան Քարափեքմեզը:

Նախկինում նրա ընկերությունն այլ անուն ուներ, հետո որոշել է այն վերանվանել: Ընդ որում, թուրքական իշխանություններն արհեստական դժվարություններ նրա համար չեն ստեղծել:

«Բնավ դժվարություն չեղավ: Տարբեր-տարբեր ֆիրմաներ կան Թուրքիո մեջ, որ այդ անուր կը գործածեն: Թուրքերը անգամ կը գործածեն, տեսած են», - նշեց Քարափեքմեզը:

Ընկերությունն իր գարդեղենը հիմնականում վաճառում է Թուրքիայում: Նախորդ տարիների համեմատ՝ պահանջարկը փոքր-ինչ նվազել է, բայց այնպիսի մեծ երկրում, ինչպիսին Թուրքիան է, որոշակի պահանջարկ, միեւնույն է, կա, նշում է վարպետը:

«Աշխարհը դժվարություն կը քաշե, Թուրքիո մեջ ալ դժվար է: Բայց Պոլսո մեջ 20 միլիոն մարդ կա, Թուրքիան ալ մեծ պետություն է, ատոր համար առեստուր կա», - նշեց ոսկերիչը:

Անցյալ տարի նա այցելել էր Yerevan Show 2015 ամենամյա միջազգային ոսկերչական ցուցահանդեսին. շատ էր ուզում տեսնել Հայաստանը 10 տարի հետո:

«Հոստեղի շուկային աղքատ ծանոթ չենք, մեզի համար կարևոր է՝ Հայաստան տեսնինք, նոր մարդերու հետ ծանոթանանք: Հոստեղ լավ ոսկերչություն կա, մինակ քիչ մը լավացնել պետք է, քիչ մըն ալ ռեկլամ ընել պետք է», - հավելեց Քարափեքմեզը:

Թուրքիայի միակ հայկական գյուղում նշել են Խաղողօրհները ու Մուսա լեռան հերոսամարտի օրը



Թուրքիայի միակ հայկական գյուղում՝ Կիլիկիայի Վազրֆում Մտամբուլից եւ աշխարհի տարբեր վայրերից եկած հայերը մեծ շուքով նշել են Աստվածամոր վերափոխման տոնը:

Ինչպես Կիլիկիայի Վազրֆից տեղեկացնում է թղթակիցը, Մուսա լեռան փեշերին գտնվող հայաբնակ Վազրֆում Աստվածամոր վերափոխման տոնի նախորդ երեկոյից հավաքված հայերը սկսել են միջոցառումները ավանդական երգ ու պարով:

Արդեն օգոստոսի 14-ին, Վազրֆի Սուրբ Աստվածածին եկեղեցում Տեր Ավետիս Թաբաշյանի առաջնորդությամբ իրականացվել է պատարագ, որից հետո եկեղեցու բակում տեղի է ունեցել Խաղողօրհները: Այնուհետ Տեր Ավետիս Թաբաշյանը մոտեցել է արդեն պատրաստված հարիսաներով մեծ կաթսաներին եւ աղոթել խաղաղության համար:

Հավաքված հայերը համտեսել են ավանդական հարիսան, շփվել միմյանց հետ եւ հրաժեշտ են տվել՝ հաջորդ տարի նույն վայրում հավաքվելու մտադրությամբ:



Արամ Ա-ն Միսի կաթողիկոսության վերադարձի պահանջի հարցով խորհրդակցություն է անցկացրել



Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսը Ժնևում մի շարք խորհրդակցություններ է անցկացրել Մեծի Տանն Կիլիկիոյի կաթողիկոսության Սսի պատմական կաթողիկոսարանի վերադարձը պահանջող հայցի վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը 2015 թվականի ապրիլի 27-ին հայց է ներկայացրել Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ պահանջելով վերադարձնել Միսի Կաթողիկոսարանի պատմական կավածրը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունից հայտնում են, որ խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են Թուրքիայի ներքին վերջին զարգացումներն, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Թուրքիայի հարաբերություններում ստեղծված նոր պայմանները եւ դրանց հավանական ազդեցությունը մեր դատի վրա: Խորհրդակցությունները ընդգրկել են նաև առաջիկա քայլերն ու հնարավորությունները:

Միյուռք

Ռումինիայի Տուլչա քաղաքում հայկական մշակութային միջոցառումների շարք է տեղի ունեցել

Ռումինիայի Տուլչա քաղաքում Էթնիկ ֆիլմերի փառատոնի շրջանակներում հուլիսի 30-ին Ռումինիայի Հայոց միության կազմակերպմամբ եւ աջակցությամբ տեղի են ունեցել հայկական մշակութային միջոցառումներ:

ԱԳՆ-ից հայտնում են, որ միջոցառումների բացման խոսքով հանդես է եկել Տուլչայի նահանգային խորհրդի խորհրդական, Ռումինիայի Հայոց միության Տուլչայի մասնաճյուղի նախագահ Էդուարդ Լուչիան Միմիոնը:

Միջոցառումների շրջանակներում տեղի ունեցան Ռումինիայում ՀՀ դեսպանորդ Աշոտ Գրիգորյանի հանդիպումները Տուլչայի նահանգային իշխանությունների ներկայացուցիչների հետ:



Էթնիկ ֆիլմերի փառատոնի ընթացքում ցուցադրվեց կանադահայ կինոռեժիսոր Ատոմ Էզդյանի «Արարատ» ֆիլմը, իսկ համերգային ծրագրում ելույթ ունեցավ Գերլա (նախկին Արմենուպոլիս) քաղաքի «Հայաքաղաք» պարի անսամբլը: Նույն օրը Տուլչայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Կոնստանդայի հոգևոր հովիվ Տեր Օշական քահանա Խաչատրյանի կողմի մատուցվեց պատարագ: Նշենք, որ Տուլչան համանուն նահանգի վարչական կենտրոնն է, որը գտնվում է Ռումինիայի սեւծովյան Դոբրոջա շրջանում: Տուլչա նահանգն ակտիվորեն համագործակցում է ՀՀ Տավուշի մարզի հետ:

The Boston Globe. Հայկական գրադարանի ձեռագրերը կցուցադրվեն Բոստոնում



Արվեստաբան Ջեֆրի Համբուրգերը դանդաղ թերթում է կաշեկազմ կրոնական գրքի էջերը, նրա աչքերը գամված են ձեռագրին, որը ներկայացնում է վաղեմի սրբերի կյանքի ժամանակագրությունը: Վարպետությունը տպավորիչ է, պատկերացումը՝ վառ եւ համոզիչ, նույնիսկ չնայած այն հանգամանքին, որ աշխատանքն ավելի քան հազար տարվա պատմություն ունի: Այս մասին [The Boston Globe](#)-ում հրապարակված հոդվածում գրում է Բրայան ՄաքՔարրին: Հարվարդի համալսարանի պրոֆեսորը գիրքը մշակում է մեծագույն հարգանքով. այս ձեռագիրն անգին է՝ նկարագրողված փորձառու գրչի կողմից, հավանաբար, Ֆրանսիայի կենտրոնական հատվածի Բենեդիկտյան արքայությունում, 935 թվականից ոչ ուշ:

Շուտով գիրքը ներկայացվելու է Բոստոնում, Միջնադարյան եւ Վերածննդի ժամանակաշրջանի ձեռագրերի ցուցահանդեսում:

Մեպտեմբերին նախանշված ցուցադրությունում 250 ցուցանմուշ է ներկայավելու: Ջեֆրի Համբուրգերի խոսքով այն «ամենահավակնոտն է լինելու Հյուսիսային Ամերիկայում կազմակերպված ձեռագրերի բոլոր ցուցահանդեսներից»:

Ցուցահանդեսն անցկացվելու է Հարվարդի համալսարանի Houghton գրադարանում, Բոստոնի քոլեջի McMullen արվեստի թանգարանում եւ Իգաբելլա Սոյուարտ Գարդների թանգարանում: Որոշ ցուցանմուշներ բերվելու են 15 տարբեր հաստատություններից, այդ թվում՝ Boston Athenaeum-ից, Ամերիկայի Հայկական գրադարանից եւ թանգարանից:

Բոստոնի հանրային գրադարանի ասոցիացիայի ղեկավար Վիվիան Սպիրոյի խոսքով՝ ձեռագրերը ցուցադրվելու են հիմնականում այն տեսքով, ինչպես ձեռք են բերվել շուրջ 100 տարի առաջ:

ԱՄՆ-ում մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած Ռամելա Կարմենը



ԱՄՆ Միչիգանի նահանգում 102 տարեկանում մահացել է Հայոց ցեղասպանությունը վերապրած վերջին ամերիկաբնակ հայերից մեկը՝ Ռամելա Կարմենը:

Հարազատների խոսքով նա խորհրդանիշն էր այն ամենի, ինչի միջով անցել է հայ ժողովուրդը, փոխանցում է [Massis Post](#)-ը:

Աշխարհում ապրում է Հայոց ցեղասպանությունից փրկված մոտ 30 մարդ:

Ռիչարդ Հարթունյանը նշանակվել է ԱՄՆ գլխավոր դատախազի խորհրդատվական կոմիտեի նախագահ

Նյու Յորքի հյուսիսային շրջանի դաշնային դատախազ Ռիչարդ Հարթունյանը երկուշաբթի՝ օգոստոսի 22-ին, նշանակվել է ԱՄՆ գլխավոր դատախազարդարադատության ղեկարտամենտի ղեկավար Լորենտա Լինչի քաղաքականության հարցերով խորհրդատվական հանձնաժողովի նախագահ, հաղորդում է [timesunion.com](#)-ը:

55-ամյա Հարթունյանը, ով 1983-ին ավարտել է Ջորջթաունի համալսարանը, իսկ 1986-ին Օլբանիի իրավաբանական դպրոցը, հանձնաժողովի փոխնախագահ էր դարձել 2015 թվականի հունվարին: Ներկայումս նա կղեկավարի հանձնաժողովը, որի խնդիրն է մշակել ԱՄՆ արդարադատության ղեկարտամենտի

քաղաքականությունը, ամրապնդել համագործակցությունը նահանգների գլխավոր դատախազների հետ, ինչպես նաեւ նպաստել իրավական նորմերի կիրառման հարցում հետեւողական լինելուն:



«Գլխավոր դատախազի խորհրդատվական հանձնաժողովն առանցքային դեր է խաղում Արդարադատության ղեկարտամենտի քաղաքականության հաստատման, իր ծրագրերի իրականացման ինչպես նաեւ ԱՄՆ ողջ տարածքում հավասար արդարադատության ու օրենքի գերակայության ապահովման հարցերում», - հայտարարել է Լինչն ու հավելել. «Որպես Գլխավոր դատախազի խորհրդատվական հանձնաժողովի նախկին նախագահ, ես գիտեմ՝ հանձնաժողովի ղեկավարներից պահանջվող կարեւոր պարտականությունները, եւ ես վստահ եմ, որ ԱՄՆ դաշնային դատախազներ Ռիչարդ Հարթունյանը եւ Բարբարա Մաքքուադը պատրաստ են ստանձնել այդպիսի կարեւոր կառույցի ղեկավարման պատասխանատվությունը»:

Նշենք, որ ԱՄՆ ներկայիս գլխավոր դատախազ Լորենտա Լինչը նախկինում գլխավորել է հենց այս կոմիտեն:

2009-ին Հարթունյանը Օբամայի կողմից նշանակվել էր Նյու Յորքի դատախազ:

Ի դեպ Հարթունյանը ԱՄՆ հայկական իրավաբանների ասոցիացիայի անդամ է, հայկական համայնքի կյանքում ակտիվ ներգրավված անձնավորություն:

Միջազգային


ՌԳ-ն ձգտելու է, որ Ադրբեջանն ու Հայաստանը փոխզիջումային եւ կողմերի համար ընդունելի լուծում գտնեն. Պուտին

Ռուսաստանը ձգտելու է, որ Ադրբեջանն ու Հայաստանը Ղարաբաղյան հակամարտության հարցում փոխզիջումային եւ կողմերի համար ընդունելի լուծում գտնեն: Այս մասին ասել է ՌԳ նախագահ Վլադիմիր Պուտինը, փոխանցում է «Ինտերֆաքս»-ը:

Նրա խոսքով այդ խնդիրը «մեզ բաժին է հասել խորհրդային անցյալից»: «Ես գիտեմ, թե դա որքան սուր հարց է եւ՝ Հայաստանի, եւ՝ Ադրբեջանի համար: Մենք ձգտելու ենք նրան, որ Հայաստանն ու Ադրբեջանն այնպիսի լուծում գտնեն, որը փոխզիջումային է, սակայն ընդունելի է երկու կողմի համար», - ասել է Պուտինը Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևի հետ հանդիպման ավարտին:

Պուտինը նաեւ հավելել է, որ լուծման մեջ չեն լինելու հաղթողներ. հաղթող պետք է լինեն երկու երկրների ժողովուրդները, եւ երկու պետությունները պետք է զգան, որ

նրանք լուծել են այդ բարդ խնդիրը հանուն ներկա եւ ապագա սերունդների:



Հիշեցնենք, որ օգոստոսի 8-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Բաքու էր ժամանել Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Իրանի նախագահների եռակողմ հանդիպման համար:

Հասարակական

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ուղերձ է հղել

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի անդամ եւ Մերի Խաղաղության Դաշնագիրը ստորագրած երկրների կառավարություններին Հայաստանի Հանրապետության ներքին իրավիճակի եւ Արցախյան հարցի խաղաղ կարգավորման խնդիրների կապակցությամբ, որտեղ մասնավորապես ասված է.

«Հայաստանի Հանրապետության ներքին իրավիճակի կտրուկ սրման խորքային եւ հիմնական պատճառներից մեկը Արցախյան խնդրի կարգավորման ինչ-որ մի նոր տարբերակ շրջանառության մեջ դնելու հարցն է, այդ թվում՝ տարածքների հանձնման պայմանով եւ հայ հանրության համար չափազանց զգայուն այլ նմանատիպ խնդիրների առկայությամբ: Ակնհայտ է, որ այդ ամենը չի նպաստելու թե կոնկրետ զինված դիմակայության անադյուն հանգուցալուծմանը եւ թե Արցախյան խնդրի վերջնական ու արդարացի կարգավորմանը:

Հետևաբար, այս դեպքում, մենք ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն իրողության վրա, որ Արցախի, Հայաստանի Հանրապետության, Մերձավոր Արեւելքի, Արեւմտյան Հայաստանի հայության հիմնախնդիրները կարող են լուծվել եւ պետք է լուծվեն բացառապես իրավական դաշտում՝ նկատի ունենալով այն բոլոր որոշումները, որոնք կայացվել են 1920-ական թթ. հայության ու Հայաստանի վերաբերյալ, սակայն մինչ օրս չեն իրականացվել: Դրանց թվում են՝ Մերի Խաղաղության Դաշնագրի 92-րդ հոդվածի պահանջը Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետության միջև:

սահմանագատման վերաբերյալ, Մերի Խաղաղության Դաշնագրի հոդվածները Հայաստանի վերաբերյալ, ԱՄՆ 28-րդ Նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճիռը Հայաստանի եւ Թուրքիայի միջև սահմանագատման վերաբերյալ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ Հայաստանի Հանրապետության, Արցախի, Մերձավոր Արեւելքի, Արեւմտյան Հայաստանի հայությունը, ինչպես նաեւ համայն հայությունը, իրավունք ունի արժանապատիվ կյանքի, զարգացման հեռանկարի եւ ապագայի հույսի: Խնդրում ենք նկատի առնել, որ նոր ժամանակաշրջանում՝ 1988-ից ի վեր, Արցախի, Հայաստանի Հանրապետության, Մերձավոր Արեւելքի հայությունը դարձել է թշնամական ծրագրերի ու գործողությունների թիրախ, այդ թվում՝ ագրեսիայի, հարձակումների, բռնազաղթի, շրջափակման: Ավելին, տարածաշրջանում հարձակումների ու ոչնչացման թիրախ են դարձել ոչ միայն հայ մարդիկ ու քաղաքացիներ, թաղամասեր ու բնակավայրեր, գյուղեր ու քաղաքներ, այլեւ Հայոց քաղաքակրթական արժեքներ՝ եկեղեցիներ, դպրոցներ, պատմամշակութային ու կրթական նշանակության շինություններ ու կառույցներ:

Այո, հայությունը եւ Հայաստանը շատ են տառապել, բայց դա չի նշանակում, թե այդպես կարող է անվերջ շարունակվել: Վաղուց ժամանակն է տարածաշրջանում իրավիճակն արմատապես փոխել հանուն խաղաղ գոյակցության ու բնականոն զարգացման:

Ձեզ ուղղված այս ուղերձի իմաստն այդ ամենում Ձեր դրական, կառուցողական եւ գործուն մասնակցության հարցը դիտարկելն է ու դա իրականացնելը»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության Լրատվական ծառայություն
25.07.2016 թ.

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՊԱՀԵԼԸ ՆԱԵՒ ՄԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՄԱԳԻԾԸ ՊԱՀԵԼ Է

Լիբանանի «Չարթոնք» օրաթերթի գլխաւոր խմբագիր Սեւակ Յակոբեան կը գրէ.

Լիբանանի մէջ վտանգուած տպագիր մամուլի հարցը դարձեալ լուսարձակի տակ է:

Լիբանանեան տպագիր մամուլի աշխատակից շատ մը պաշտօնակիցներ, որոնք պաշտօնէ արձակուած են տուեալ մամուլին նիւթական նեղութեան պատճառով, գանգատ ներկայացուցին Լրագրողներու սենտիքային, թէ նկատի ունենալով իրենց դժուար կացութիւնը՝ մամուլի տէրերը շահագործելով ընկերային դառն վիճակը, սկսած են իրենց գործ առաջարկել շատ ցած աշխատավարձով, որով անկարելի է արժանապատուութեամբ ապրիլ:

Ահաւասիկ Լիբանանի տնտեսական դժուար կացութեան ստեղծած ընկերային այլ հարց մը, որ ունի աւելի քան մութ հեռանկար՝ երբ նկատի ունենանք, որ տպագիր մամուլը արհեստագիտութեան ու համացանցի յառաջացումով,

արդեն իսկ համաշխարհայնորեն կը գտնուի մութ փապուղիի մը մէջ, որմէ ըստ երեւոյթին դժբախտաբար քիչ հաստատութիւններ ապահով դուրս պիտի գան:

Հայ տպագիր մամուլը ինչ որ չափով տակաւին կը տոկայ՝ Սփիւռքի եւ Հայրենիքի մէջ, ի գին ամէն դժուարութեանց: Աշխատինք ու ջանանք, որ համաշխարհային այս ալիքը չհարուածէ նաեւ զայն:



Համահայկական զօրաշարժ եւ ռազմավարութիւն պէտք է շրջանցելու այս վտանգը:

Վտանգը այս պարագային բնականաբար ազգային առումով է, որովհետեւ հայ մամուլը իր մասնագիտական ծառայութենէն զատ, նաեւ հենասիւններէն է ազգապահպանման՝ իր հայեցի ուղղուածութեամբ հայ ժողովուրդը զգաստ պահելու իր էութեան եւ իրաւունքներուն նկատմամբ: Հետեւաբար հայ մամուլը պահելը նաեւ մեր հայկական դիմագիծը պահել է:

ՍԵՒՎԿ ՅԱԿՈՐԵԱՆ

ՄԱՍԻԿՈՆԷԻՑ ՏԱՐՕՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՏ

Երեւան, մարշալ Բաղրամեան 24^ճ, XI յարկ, թիւ 134 սենեակ, հեռ. 093.840.342, 667.830, 589.431 **Yerevan, Baghramian 24^ճ, tel. 093.840.342, 667.830, 589.431, E-maii: hmbrafael@gmail.com**

ՄԱՍՆԱ ԾՈՒԵՐԻՆ՝ ՓԱՏԱԳՂԹՂԹԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՎ

Հայ ժողովրդին իր պետական անկախութիւնը վերականգնեց 1988 թ. փետրուարի 20-ին սկսուած ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏՈՎ : 1991 թ. Հայաստանի ղեկավար կարգուած օտարի կամակատարները սկսեցին վերացնել Արցախականո՛վ մեր ժողովրդի կոթողած Հայաստանի 1988-1991 թթ. անկախութիւնը: Այդ քայլերից մէկը **ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՎ** ազերիների դէմ մեր 1992-1993 թթ. յաղթարշաւի կասեցումն էր եւ **Ղրղզստանի Բիշքէկ քաղաքում** 1994 թ. մայիսի 5-ին Հայաստանին պարտադրած զինադադարը,

որով Հայաստանից ջախջախիչ պարտութիւն կրած **Ադրբեջանը փոխանակ ստորագրելու անձնատուութեան փաստաթուղթ, ստացաւ հրադադար: Մոսկուան այնուհետեւ 1995 եւ 2010 թթ. ՀՀ առաջին եւ երրորդ նախագահներին ստորագրել տուեց 25 եւ 46 տարով ռուսական զօրքի առկայութիւնը Հայաստանում շարունակելու՝ «ՌՈՒՍ-հայկական պայմանագիր» կոչուող կարանագրերը: Գրանից յետոյ հայ ժողովրդի ձեռք բերած ինքնիշխանութիւնը Ռուսաստանին շնորհած ՀՀ կեղծընտիր նախագահը 2013 թ.սեպտեմբերի 3-ին եւ 2014 թ. հոկտեմբերի 10-ին, առանց ՀՀ հանրային-քաղաքական կառոյցների քննարկման, ՀՀ-ն **գրաւադրեց** Ռուսաստանի սարքած տնտեսական միջնադարեան յետաշրջի կառոյցի մէջ: Այդպէս անթաքոյց վաճառքի հանուեց նաեւ Հայաստանի կեղծ անկախութիւնը, որով ՀՀ ղեկավարութիւնը մօտ 20 տարի մոլորեցնում էր հայութեանը: Ասել է թէ՛ ՀՀ նախագահի պաշտօնակատարը Հայաստանի անկախութեան բարձումը եւ **երկրի ինքնիշխանութեան փաստացի չգոյութիւնը վաւերացրեց նաեւ իրաւաբանօրէն:** Եւ ահա 1. հայութեան վերականգնած անկախ պետականութիւնը քաղաքակրթութիւնից 100 տարի յետ ընկած բռնապետութեանը վաճառած, 2. երկրորդ կործանումի հասցրած, 3. վերջին քսան տարում Հայաստանը աւելի քան մէկ միլիոնով հայազրկած, 4. հայութեանը ռուսաճարակով վարակած ու վերջապէս 5. Ռուսաստանից ազատագրուելու եւ ՀՀ-ն անկախացնելու՝ ՀՀ բնակչութեան պատմական բացառիկ հանրաքուէի արդիւնքները փոշիացրած **ոճրախումբը** ծրագրում է նշել ՀՀ անկախութեան հանրաքուէի տարելիցը՝ խեղաթիւրելու համար նաեւ անկախութեան հանրաքուէի էութիւնն ու նշանակութիւնը: Սա մեր ժողովրդին մտազարի տեղ դնող նոյնպիսի մի խարդաւանք է, ինչպէսին 1920 թ. դեկտեմբերի 3-ից 1921թ. փետրուարի 18-ը եւ մինչեւ 1988 թ. կատարում էին Սովետ Միութեանը, այսինքն՝ սատանայի իշխանութեանը ճորտագրուած հայ ղեկավարները, որոնք Հայաստանի տարածքների աւելի քան կէսը Թուրքիային, Ադրբեջանին եւ Վրաստանին բռնակցած եւ Հայաստանը զաւթած դիւապետութեանը յայտարարում էին մեր ժողովրդի փրկիչ, հայոց պետականութիւնը վերացնելու եւ մեր մտաւորականութեան, պետական պաշտօնեաների ու ազատամարտի հերոսների կացնահարումը սկզբնաւորած օրը մեծ շուքով տօնում էին՝ այդ օրը յայտարարելով հայ ժողովրդի յաղթանակի սկիզբը: Հայ բոլշեւիկ ղեկավարների **համասպանողի** դէմ ապստամբած ՀՀ բնակչութիւնը 1921 թ. փետրուարի 18-ին մօտ հինգ ամսով վերականգնեց իր անկախ պետականութիւնը: ՀՀ բնակչութիւնը պէտք է բոյկոտի՝ անկախութեան հանրաքուէի 25-ամեակի առթիւ ՀՀ կառավարող ոճրախմբի ծրագրած հերթական անպարարութիւնը եւ ազգային-քաղաքական կառոյցների եւ գիտակրթամշակութային գործիչների միասնական հանրահաւաքով ԻՆՔԸ ՆՇԻ ԻՐ ԿԵՐՏԱԾ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ հանրաքուէի տարեդարձը՝ նոյնը յորդորելով անել նաեւ Սփիւռքին:**

15 օգոստոսի.2016 թ.

ՄԱՍԻԿՈՆԷԻՑ ՏԱՐՕՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՏ
հանրային կառոյցի լիազօրութեամբ՝ **Ռաֆայել Համբարձումեան**

چکیده کتاب تاریخ آرتساخ (قره باغ)

(۶)

نگارش: دکتر ادیک باغداساریان

رویدادهای آرتساخ (قره باغ) در سالهای ۱۹۲۳-۱۹۱۷

چیچرین در تلگراف خود به ارجنیکیدزه به تاریخ ۹ ژوئیه چنین متذکر می‌شود: "بارها به ما اعلام کرده بودند که گویا حفظ قره باغ و زانگور تحت حکومت ما به جای الحاق آنها به آذربایجان، حکومت شوروی را در باکو سرنگون خواهد کرد. لطفاً بطور روشن و واضح گزارش دهید که مسئله چیست؟ اگر مسئله حمایت از تمایلات اشغالگرانه ملی گرایان افراطی مسلمان است، باید بگویم که این سیاست ناپسندی است و ما با اعمال چنین سیاستی باعث رشد و رونق احساسات ملی گرایانه خواهیم شد و بنابراین با مساواتی‌ها برابر می‌شویم و در نتیجه به آنان کمک کرده‌ایم...".

بوروی سیاسی کمیته مرکزی حزب کمونیست (بلشویک) روسیه با در دست داشتن چنین مدارک انکار ناپذیری در روز ۷ ژوئیه ۱۹۲۰ تصمیمی درباره سیاست خود در خصوص قفقاز اتخاذ کرد. مطابق با ماده هشتم این مصوبه یا فرمان به کمونیست‌های فعال قفقاز مسئولیت داده می‌شد تا به ساکنان مناطق تحت اشغال ارتش سرخ توضیح دهند و آنها را قانع سازند که این اقدامات ماهیت موقتی دارد و هدف آنها جلوگیری از خونریزی‌های قومی است و مسئله تعلق سرزمین‌ها را یک کمیسیون مختلط که به خواست و اراده اقوام ساکن در این مناطق تشکیل می‌گردد، حل و فصل خواهد شد". پس به روشنی و وضوح مسئله حمایت از اصل حق تعیین سرنوشت ملل مطرح شده بود و تنها اجرای عادلانه این امر و تصمیم مهم باقی مانده بود.

با این حال رهبری آذربایجان به ریاست نریمانف این مصوبه و فرمان را خنثی کرد. او با استفاده از تمام امکانات تبلیغاتی ممکن تلاش می‌کرد این امر را بقبولاند که گویا قره باغ از دیر باز سرزمین متعلق به آذربایجان بوده است، زیرا که از نظر اقتصادی با دشت قره باغ و سایر نواحی جمهوری بویژه صنعت باکو ارتباط ناگسستی دارد، و بنابراین جدایی آن از آذربایجان غیر ممکن است. همین امر را د. گولیف (قلی اف. م.) مورخ نیز مورد تاکید قرار می‌دهد و سعی می‌کند ادعاهای رهبران جمهوری را در مورد قره باغ توجیه نماید ولی چون مطلب دیگری برای تحکیم این امر پیدا نمی‌کند به عامل اقتصادی متوسل می‌شود. بنظر شخص اخیر، الحاق قره باغ به ارمنستان توسعه نیافته از نظر اقتصادی صحیح نیست زیرا کشور اخیر قادر نخواهد بود به قره باغ ویران شده کمک کند تا اقتصاد خود را باز سازی نماید. اکنون گولیف‌ها با کنار نهادن حق تعیین سرنوشت ملی مسایل اجتماعی را در اهمیت اول قرار می‌دهند. هر گاه مسئله به نخجوان مربوط می‌شود همین مسایل اجتماعی فراموش می‌گردد و ویژگی اکثریت ملی ساکنان مطرح می‌شود.

روز ۱۰ اوت ۱۹۲۰ (یعنی روزی که پیمان سور امضاء شد) میان روسیه شوروی و جمهوری ارمنستان توافقنامه‌ای امضاء شد که بر پایه آن ارتش شوروی مناطق مورد نزاع قره باغ کوهستانی، زانگور و نخجوان را تصرف می‌کنند تا در آینده بطور قطعی سرنوشت آنها تعیین شود.

